ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«23» 04 2025թ.
No 003753

«ՆՈՈՒԹԲՈՒՔ ՍԹՈՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԱՐՄԱՆ ԳՅՈՒՐՋԻՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 22)

Հարգելի՛ պարոն Գյուրջիյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ **Հանձնաժողով**) անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչության (այսուհետ՝ **Պատասխանատու ստորաբաժանում**) կողմից կազմված ««Նոութբուք Սթոր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-00662/25 վարույթում առկա փաստական հանգամանքների մասին» տեղեկանքը (այսուհետ՝ **Տեղեկանք**):

Հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 11-ի ««Նոութբուք Սթոր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 64-Ա որոշմամբ հարուցված թիվ ՀԳ-00662/25 վարույթի (այսուհետ՝ **Վարույթ**) փաստական հանգամանքների բազմակողմանի և լրիվ քննարկման անհրաժեշտությունից ելնելով՝ առաջարկում ենք սույն գրությունը ստանալու օրվանից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել Տեղեկանքի առնչությամբ գրավոր դիրքորոշում:

Տեղեկացնում ենք, որ Տեղեկանքը հանդիսանում է բացառապես Պատասխանատու ստորաբաժանման դիրքորոշումը, և Հանձնաժողովը Վարույթով եզրափակող որոշում կայացնելիս կաշկանդված չէ Տեղեկանքի փաստական և իրավական հիմքերով և հիմնավորումներով:

Միաժամանակ տեղեկացնում ենք նաև, որ

1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթի իրականացման հետ կապված փաստաթղթերը կազմվում են, և ամբողջ գործավարությունն իրականացվում է հայերենով:

3. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Ընդ որում, նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

4. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: Կողմն իրավունք չունի ներկայացնելու այնպիսի ապացույցներ, որոնք չեն ներկայացվել վարչական վարույթի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմը չի ներկայացնում բավարար հիմնավորումներ այն մասին, որ օբյեկտիվորեն զրկված է եղել նշված ապացույցները վարչական վարույթի ընթացքում ներկայացնելու հնարավորությունից: Միաժամանակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2.1-րդ մասը սահմանում է, որ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշելիս վիճարկող կողմի՝ իր համար բարենպաստ հետևանքներ առաջացնող ապացույցների՝ վարչական վարույթի ընթացքում չտրամադրման հետևանքով առաջացած ոչ բարենպաստ հետևանքների ապացուցման բեռը չի կարող դրվել վարչական մարմնի վրա:

5. Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ

տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը:

6. Պատասխանատվության միջոցի ընտրությունը և տուգանքի հաշվարկումն իրականացվում է Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 395-Ն որոշմամբ սահմանված մեթոդաբանությամբ (այսուհետ նաև՝ **Մեթոդաբանություն**): Ընդ որում.

1) Մեթոդաբանության 44-րդ կետի համաձայն՝ պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների առկայության ապացուցման բեռը կրում է վարույթով պատասխանողը.

2) Մեթոդաբանության 40-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից վարույթով իրեն վերագրվող իրավախախտման հետևանքների վերացումը, իսկ հետևանքների վերացման անհնարինության դեպքում՝ այդ ուղղությամբ, մինչև վարույթում քննարկվող հարցերի վերաբերյալ Հանձնաժողով գրավոր դիրքորոշում ներկայացնելը, համապատասխան գործողությունների ձեռնարկումը դիտարկվում է որպես մեղմացնող հանգամանք՝ 10% դրույքաչափով.

3) Մեթոդաբանության 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից վարույթով իրեն վերագրվող իրավախախտման փաստը գրավոր ընդունելը դիտարկվում է որպես մեղմացնող հանգամանք՝ 15% դրույքաչափով:

7. ՀՀ քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածով վարչական վարույթով ապացույց կամ բացատրություն կեղծելու, փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու կամ կեղծ ապացույց ներկայացնելու համար սահմանված է քրեական պատասխանատվություն:

8. ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով վարչական վարույթով սուտ բացատրություն կամ սուտ ցուցմունք տալու համար սահմանված է քրեական պատասխանատվություն:

9. Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ նաև՝ **Համակարգ**) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Կից ուղարկվում է Տեղեկանքը:

Առդիր՝ «27» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ**

Կատարող՝ Աստղիկ Վահանյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (274)

www.competition.am կայքում հրապարակման օրը՝ 27 մայիսի 2025 թվական:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՆՈՈՒԹԲՈՒՔ ՍԹՈՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ ՀԳ-00662/25 ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԱՌԿԱ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Վարույթի ընթացքի հակիրճ նկարագրությունը.

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2025 թվականի փետրվարի 11-ի ««Նոութբուք Սթոր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 64-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 64-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-00662/25 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

«Նոութբուք Սթոր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) թիվ 64-Ա որոշումը ստացել է 2025 թվականի փետրվարի 14-ին և 2025 թվականի փետրվարի 28-ին ներկայացրել է գրավոր դիրքորոշում (այսուհետ նաև՝ **Դիրքորոշում**):

2. Վարույթի հարուցման առիթի և հիմքի հակիրճ նկարագրությունը.

Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչությունը (այսուհետ նաև՝ **Պատասխանատու ստորաբաժանում**) 2025 թվականի փետրվարի 7-ի թիվ 1409 զեկուցագրով առաջարկել է Ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել վարույթ:

Վարույթը հարուցվել է զեղչ հայտարարելու և այն չկիրառելու, ինչպես նաև կանխիկ և անկանխիկ վճարման դեպքերում տարբեր գներով ապրանքներն իրացնելու առնչությամբ Ընկերության վարքագծում ինչպես առանձին, այնպես էլ համակցության մեջ անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորումներով անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

3. Ընկերության դիրքորոշումը.

Ընկերությունը Դիրքորոշմամբ հայտնել է, որ «REDstore.am» կայքում այն ապրանքները, որոնք ունեն երկու արժեք՝ գին և զեղչված արժեք, սպառողը «գին» արժեքից օգտվում է, երբ վճարումը կատարում է անկանխիկ եղանակով, մասնավորապես՝ ապառիկ գնման դեպքում կամ քարտով վճարելիս: Իսկ «զեղչված» արժեքից կարող է օգտվել երբ գնումը կատարվում է կանխիկ եղանակով: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ անկանխիկ գնումների դեպքում բանկերի կողմից գանձվում է 3-8% միջնորդավճար, ինչը կազմակերպության կողմից լրացուցիչ զեղչ տրամադրելը դարձնում է անհնարին: «REDstore.am» կայքի «Գնում կատարելու պայմաններ և դրույթներ» բաժնում հստակ նշված է, որ զեղչված արժեքից օգտվելու համար պետք է ընտրել «Կանխիկ առաքիչի միջոցով» վճարման եղանակը:

Ընկերությունը նշել է նաև, որ 2025 թվականի հունվարի 31-ին կատարված հսկիչ գնումից երկու օր առաջ ևս Ընկերությանը պատկանող Մաշտոցի 7/12 հասցեում գտնվող խանութ-սրահից կատարվել է հսկիչ գնում, որի արդյունքում գնվել է «Apple iPhone 12» հեռախոս, որն ակտիվացվել է և հաշվի առնելով «Apple» ապրանքանիշի առանձնահատկությունները, այն համարվում է օգտագործված հեռախոս: Հեռախոսը վերադարձվել է, ինչը հանգեցրել է Ընկերության ֆինանսական կորուստների: Սակայն թիվ 64-Ա որոշման մեջ տվյալ դեպքի մասին ոչինչ նշված չէ:

Ինչպես նաև Ընկերությունը հավաստիացրել է, որ հանդես գալով «REDstore» ապրանքային նշանի ներքո, վարում է բարեխիղճ մրցակցային քաղաքականություն, ինչի վկայությունն Ընկերության վերջին երեք տարիների ձեռքբերումները Հայաստանի շուկայում: Ընկերության կողմից որևէ օրենքի խախտում առկա լինելու դեպքում, վերջինս խնդրել է այն ներկայացնել և կիրառել նախազգուշացում, քանի որ Ընկերության գործողությունները խախտում կատարելու որևէ միտում չեն ունեցել:

Ընկերությունը հայտնել է, եթե իրականում Հանձնաժողովը ցանկացել է պարզել, թե արդյոք Ընկերությունը վարում է անբարեխիղճ մրցակցություն, ապա հսկիչ գնում պետք է կատարեր ոչ թե խանութում՝ բանկային քարտի միջոցով, այլ՝ «Redstore.am» կայքից: Այդ դեպքում Հանձնաժողովը կհամոզվեր, որ որևէ մոլորեցնող հանգամանք այնտեղ չկա: Բացի այդ, եթե պատվերը գրանցելու ընթացքում առաջանում են որևէ խնդիրներ, Ընկերության զանգերի կենտրոնը առավելագույնը 5 րոպեի ընթացքում կապ է հաստատում գնորդի հետ և ևս մեկ անգամ պարզաբանում վճարման պայմաններն ու դրույթները:

4. Հանձնաժողովի կողմից պահանջված և ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը.

1. Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի հունվարի 31-ի «Արտաքին դիտում իրականացնելու մասին» թիվ 24-Ա հրամանի հիման վրա 2025 թվականի հունվարի 31-ին «REDstore.am» կայքում (այսուհետ նաև՝ **Կայք**) իրականացվել է արտաքին դիտում, որի արդյունքում կազմվել է թիվ 24 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 24 արձանագրություն**):

Թիվ 24 արձանագրության համաձայն՝ արտաքին դիտման արդյունքում, ի թիվս այլնի, պարզվել է հետևյալը.

1. Կայքի «Տեսականի» բաժնում ներկայացված են հետևյալ ենթաբաժինները՝ «սմարթֆոններ», «պլանշետներ», «ժամացույցներ», «նոթբուքեր», «համակարգիչներ», «մոնիտորներ», «հեռուստացույցներ», «տպիչներ», «աուդիո-վիդեո սարք», «պրոյեկտորներ», «ֆոտոխցիկներ», «խաղային կոնսոլներ», «սկուտերներ», «ցանցային սարքավորումներ», «դրոններ», «խոշոր կենցաղային տեխնիկա», «մանր կենցաղային տեխնիկա», «գեղեցկություն և խնամք», «աքսեսուարներ», «այլ»:

2. Կայքում ներկայացված որոշ ապրանքներ ունեն երկու արժեք՝ «Գինը» և «Զեղչված արժեք»: Տվյալ ապրանքը գնելու դեպքում ներկայացվում է վճարման ենթակա միայն «Գինը» տարբերակում ներկայացված, «Զեղչված արժեք» տարբերակից ավելի բարձր գին ունեցող տարբերակը: Օրինակ՝

1) Սմարթֆոն - Samsung Galaxy A06 4/64 GB (Gold), գինը 44 000 AMD, զեղչված արժեք 41 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 44 000 AMD:

2) Սմարթֆոն - Samsung Galaxy A25 8/256 GB (Black), գինը 101 000 AMD, զեղչված արժեք 92 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 101 000 AMD:

3) Սմարթֆոն - Samsung Galaxy A55 8GB/256 GB (Lemon), գինը 159 000 AMD, զեղչված արժեք 139 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 159 000 AMD:

4) iPhone 12 64GB (White), գինը 205 000 AMD, զեղչված արժեք 195 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 205 000 AMD:

5) Սմարթֆոն - iPhone 11 128GB (White), գինը 219 000 AMD, զեղչված արժեք 197 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 219 000 AMD:

6) Սմարթֆոն -iPhone 12 128GB (Black), գինը 235 000 AMD, զեղչված արժեք 209 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 235 000 AMD:

7) Սմարթֆոն - Samsung Galaxy S23 128 GB (Phantom Black), գինը 255 000 AMD, զեղչված արժեք 229 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 255 000 AMD:

8) Սմարթֆոն – Xiaomi Poco F6 Pro 16/1TB (White), գինը 285 000 AMD, զեղչված արժեք 254 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 285 000 AMD:

9) Սմարթֆոն - Samsung Galaxy Z Fold 6 12/256 GB (Pink), գինը 609 000 AMD, զեղչված արժեք 549 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 609 000 AMD:

10) Պլանշետ – Samsung Galaxy Tab A8 10.5 32 GB (x200) (Gray), գինը 78 000 AMD, զեղչված արժեք 70 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 78 000 AMD:

11) Պլանշետ – iPad mini 6 64 GB Wi-Fi (Starlight), գինը 229 000 AMD, զեղչված արժեք 209 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 229 000 AMD:

12) Նոթբուք – Lenovo V 15 G4 IRU (Core 13), գինը 178 000 AMD, զեղչված արժեք 163 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 178 000 AMD:

13) Նոթբուք – Dell Vostro 3520 (I7/16GB/512GB), գինը 309 000 AMD, զեղչված արժեք 289 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 309 000 AMD:

14) Տպիչ – HP Color Laser Jet Pro 4203DW, գինը 275 000 AMD, զեղչված արժեք 255 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 275 000 AMD:

15) Ֆոտոխցիկ – Insta360 GO 3S 64GB (Black), գինը 235 000 AMD, զեղչված արժեք 215 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 235 000 AMD:

16) Ականջակալ – Apple AirPods Max (Green), գինը 237 000 AMD, զեղչված արժեք 214 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 237 000 AMD:

17) Ականջակալ – Samsung Galaxy Buds 3 Pro (White), գինը 85 000 AMD, զեղչված արժեք 72 800 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 85 000 AMD:

18) Վարսահարդարիչ – Dyson Airwrap Complete Long Volumise HS05 (Strawberry Bronze/Blush Pink), գինը 284 000 AMD, զեղչված արժեք 259 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 284 000 AMD:

19) Փոշեկուլ – Xiaomi Vacuum Robot E5 (White), գինը 61 000 AMD, զեղչված արժեք 55 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 61 000 AMD:

20) Խաղային Կոնսոլներ – Playstation 5 Slim Digital Edition, գինը 234 000 AMD, զեղչված արժեք 214 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 234 000 AMD:

2. Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի հունվարի 31-ի «Հսկիչ գնում իրականացնելու մասին» թիվ 25-Ա հրամանի հիման վրա 2025 թվականի փետրվարի 3-ին Ընկերությանը պատկանող՝ ք. Երևան, Աբովյան 19 հասցեում գործող «Red Store» առևտրի օբյեկտում իրականացվել է հսկիչ գնում (այսուհետ նաև՝ **Հսկիչ գնում**), որի արդյունքում 2025 թվականի փետրվարի 3-ին կազմվել է «Հսկիչ գնման արդյունքների վերաբերյալ» թիվ 25 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **Թիվ 25 արձանագրություն**):

Թիվ 25 արձանագրության համաձայն՝ Հսկիչ գնմամբ ձեռք է բերվել Samsung Galaxy A55 հեռախոսը, որի արժեքը զեղչի կիրառմամբ 139 000 ՀՀ դրամ էր, իսկ առանց զեղչի՝ 159 000 ՀՀ դրամ: Հսկիչ գնումն իրականացվել է անկանխիկ եղանակով և Samsung Galaxy A55 հեռախոսի համար վճարվել է 159 000 ՀՀ դրամ:

3. ՊԵԿ-ի տեղեկատվական տվյալների շտեմարանում առկա տվյալների համաձայն՝ Ընկերության 2024 թվականի հասույթի չափը կազմում է 2 881 747 735 ՀՀ դրամ:

5. Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Պատասխանատու ստորաբաժանումը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.

1. Ընկերության կողմից իրականացվել է զեղչի կիրառմամբ ակցիա, որի մեկնարկի և ավարտի օրերի մասին տեղեկատվությունն Ընկերությունը իրազեկման որևէ միջոցով չի տրամադրել:

2. Կայքում ներկայացված որոշ ապրանքներ ունեցել են երկու արժեք՝ «Գինը» և «Զեղչված արժեք»: Տվյալ ապրանքը գնելու դեպքում ներկայացվել է վճարման ենթակա միայն «Գինը» տարբերակում ներկայացված, «Զեղչված արժեք» տարբերակից ավելի բարձր գին ունեցող տարբերակը: Օրինակ՝

1) Սմարթֆոն - Samsung Galaxy A06 4/64 GB (Gold), գինը 44 000 AMD, զեղչված արժեք 41 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 44 000 AMD:

2) Սմարթֆոն - Samsung Galaxy A25 8/256 GB (Black), գինը 101 000 AMD, զեղչված արժեք 92 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 101 000 AMD:

3) Սմարթֆոն - Samsung Galaxy A55 8GB/256 GB (Lemon), գինը 159 000 AMD, զեղչված արժեք 139 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 159 000 AMD:

4) iPhone 12 64GB (White), գինը 205 000 AMD, զեղչված արժեք 195 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 205 000 AMD:

5) Սմարթֆոն - iPhone 11 128GB (White), գինը 219 000 AMD, զեղչված արժեք 197 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 219 000 AMD:

6) Սմարթֆոն -iPhone 12 128GB (Black), գինը 235 000 AMD, զեղչված արժեք 209 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 235 000 AMD:

7) Սմարթֆոն - Samsung Galaxy S23 128 GB (Phantom Black), գինը 255 000 AMD, զեղչված արժեք 229 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 255 000 AMD:

8) Սմարթֆոն – Xiaomi Poco F6 Pro 16/1TB (White), գինը 285 000 AMD, զեղչված արժեք 254 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 285 000 AMD:

9) Սմարթֆոն - Samsung Galaxy Z Fold 6 12/256 GB (Pink), գինը 609 000 AMD, զեղչված արժեք 549 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 609 000 AMD:

10) Պլանշետ – Samsung Galaxy Tab A8 10.5 32 GB (x200) (Gray), գինը 78 000 AMD, զեղչված արժեք 70 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 78 000 AMD:

11) Պլանշետ – iPad mini 6 64 GB Wi-Fi (Starlight), գինը 229 000 AMD, զեղչված արժեք 209 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 229 000 AMD:

12) Նոթբուք – Lenovo V 15 G4 IRU (Core 13), գինը 178 000 AMD, զեղչված արժեք 163 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 178 000 AMD:

13) Նոթբուք – Dell Vostro 3520 (I7/16GB/512GB), գինը 309 000 AMD, զեղչված արժեք 289 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 309 000 AMD:

14) Տպիչ – HP Color Laser Jet Pro 4203DW, գինը 275 000 AMD, զեղչված արժեք 255 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 275 000 AMD:

15) Ֆոտոխցիկ – Insta360 GO 3S 64GB (Black), գինը 235 000 AMD, զեղչված արժեք 215 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 235 000 AMD:

16) Ականջակալ – Apple AirPods Max (Green), գինը 237 000 AMD, զեղչված արժեք 214 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 237 000 AMD:

17) Ականջակալ – Samsung Galaxy Buds 3 Pro (White), գինը 85 000 AMD, զեղչված արժեք 72 800 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 85 000 AMD:

18) Վարսահարդարիչ – Dyson Airwrap Complete Long Volumise HS05 (Strawberry Bronze/Blush Pink), գինը 284 000 AMD, զեղչված արժեք 259 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 284 000 AMD:

19) Փոշեկուլ – Xiaomi Vacuum Robot E5 (White), գինը 61 000 AMD, զեղչված արժեք 55 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 61 000 AMD:

20) Խաղային Կոնսոլներ – Playstation 5 Slim Digital Edition, գինը 234 000 AMD, զեղչված արժեք 214 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 234 000 AMD:

3. Հսկիչ գնմամբ ձեռք է բերվել Samsung Galaxy A55 հեռախոսը, որի արժեքը զեղչի կիրառմամբ 139 000 ՀՀ դրամ էր, իսկ առանց զեղչի՝ 159 000 ՀՀ դրամ: Հսկիչ գնումն իրականացվել է անկանխիկ եղանակով և Samsung Galaxy A55 հեռախոսի համար վճարվել է 159 000 ՀՀ դրամ:

4. ՊԵԿ-ի տեղեկատվական տվյալների շտեմարանում առկա տվյալների համաձայն՝ Ընկերության 2024 թվականի հասույթի չափը կազմում է 2 881 747 735 ՀՀ դրամ:

6. Վարույթի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Պատասխանատու սփորաբաժանումը եզրահանգում է հետևյալին.

1) Ընկերության կողմից իրավախախտում կատարված լինելու հարցի կապակցությամբ.

Վարույթը հարուցվել է զեղչ հայտարարելու և այն չկիրառելու, ինչպես նաև կանխիկ և անկանխիկ վճարման դեպքերում տարբեր գներով ապրանքներն իրացնելու առնչությամբ Ընկերության վարքագծում ինչպես առանձին, այնպես էլ համակցության մեջ անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորումներով անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

Ընկերությունը Դիրքորոշմամբ հայտնել է, որ «REDstore.am» կայքում այն ապրանքները, որոնք ունեն երկու արժեք՝ գին և զեղչված արժեք, սպառողը «գին» արժեքից օգտվում է, երբ վճարումը կատարում է անկանխիկ եղանակով, մասնավորապես՝ ապառիկ գնման դեպքում կամ քարտով վճարելիս: Իսկ «զեղչված» արժեքից կարող է օգտվել երբ գնումը կատարվում է կանխիկ եղանակով: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ անկանխիկ գնումների դեպքում բանկերի կողմից գանձվում է 3-8% միջնորդավճար,

ինչը կազմակերպության կողմից լրացուցիչ զեղչ տրամադրելը դարձնում է անհնարին: «REDstore.am» կայքի «Գնում կատարելու պայմաններ և դրույթներ» բաժնում հստակ նշված է, որ զեղչված արժեքից օգտվելու համար պետք է ընտրել «Կանխիկ առաքիչի միջոցով» վճարման եղանակը:

Ընկերությունը նշել է նաև, որ 2025 թվականի հունվարի 31-ին կատարված հսկիչ գնումից երկու օր առաջ ևս Ընկերությանը պատկանող Մաշտոցի 7/12 հասցեում գտնվող խանութ-սրահից կատարվել է հսկիչ գնում, որի արդյունքում գնվել է «Apple iPhone 12» հեռախոս, որն ակտիվացվել է և հաշվի առնելով «Apple» ապրանքանիշի առանձնահատկությունները, այն համարվում է օգտագործված հեռախոս: Հեռախոսը վերադարձվել է, ինչը հանգեցրել է Ընկերության ֆինանսական կորուստների: Սակայն թիվ 64-Ա որոշման մեջ տվյալ դեպքի մասին ոչինչ նշված չէ:

Ինչպես նաև Ընկերությունը հավաստիացրել է, որ հանդես գալով «REDstore» ապրանքային նշանի ներքո, վարում է բարեխիղճ մրցակցային քաղաքականություն, ինչի վկայությունն Ընկերության վերջին երեք տարիների ձեռքբերումները Հայաստանի շուկայում: Ընկերության կողմից որևէ օրենքի խախտում առկա լինելու դեպքում, վերջինս խնդրել է այն ներկայացնել և կիրառել նախազգուշացում, քանի որ Ընկերության գործողությունները խախտում կատարելու որևէ միտում չեն ունեցել:

Ընկերությունը հայտնել է, եթե իրականում Հանձնաժողովը ցանկացել է պարզել, թե արդյոք Ընկերությունը վարում է անբարեխիղճ մրցակցություն, ապա հսկիչ գնում պետք է կատարեր ոչ թե խանութում՝ բանկային քարտի միջոցով, այլ՝ «Redstore.am» կայքից: Այդ դեպքում Հանձնաժողովը կհամոզվեր, որ որևէ մոլորեցնող հանգամանք այնտեղ չկա: Բացի այդ, եթե պատվերը գրանցելու ընթացքում առաջանում են որևէ խնդիրներ, Ընկերության զանգերի կենտրոնը առավելագույնը 5 րոպեի ընթացքում կապ է հաստատում գնորդի հետ և ևս մեկ անգամ պարզաբանում վճարման պայմաններն ու դրույթները:

Այդ կապակցությամբ, նախևառաջ, Պատասխանատու սփորաբաժանումը անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումների պարզաբանմանը.

1. Ինչպե՞ս է դրսևորվում անբարեխիղճ մրցակցության օբյեկտիվ կողմը.

2. Ինչպե՞ս է դրսևորվում հասարակության մոլորեցմամբ անբարեխիղճ մրցակցության օբյեկտիվ կողմը.

3. Ակցիայի առնչությամբ ո՞ր վարքագիծը կարող է հանգեցնել հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության.

4. Արդյո՞ք փնտեսավարող սուբյեկտի կողմից զեղչը կարող է կիրառվել միայն կանխիկ եղանակով վճարման դեպքում.

5. Տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթում ո՞վ է կրում վարույթով պատասխանողի համար բարենպաստ փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը.

6. Արդյո՞ք Պատասխանատու սփորաբաժանումը պարտավոր է անդրադառնալ փնտեսավարող սուբյեկտի բոլոր փաստարկներին:

<u>Առաջին հարցադրման կապակցությամբ.</u>

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն են սույն օրենքի 17-24-րդ հոդվածներում նախատեսված դեպքերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողությունները:

Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 16-24-րդ հոդվածներում նկարագրված իրավախախտումների հատկանիշների առկայության հարցը գնահատում է Հանձնաժողովը:

Վերոնշյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է վարքագիծը անբարեխիղճ մրցակցություն որակելու երկու եղանակ. մի դեպքում անբարեխիղճ մրցակցության դեպքերն են Օրենքի 16-24-րդ հոդվածներով սահմանված առանձին դրսևորումները, մյուս դեպքում՝ Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշները պարունակող գործողությունը կամ վարքագիծը, եթե այն.

- հակասում է Օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին,
- խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս և սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում հասարակության մոլորեցումը, այդ թվում՝

1) ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց գովազդմանը, տարածմանը կամ իրացմանը նպաստող միջոցառումների, ապրանքի աշխարհագրական ծագման կամ սույն օրենքի 20-րդ հոդվածում թվարկված բնութագրերի կամ պայմանների վերաբերյալ.

2) ապրանքների որակն անհիմն չափազանցելը կամ որակի, քանակի կամ այլ բնութագրերի կամ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կամ տեղեկատվությունն այն ձևով ներկայացնելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման).

3) գովազդի մեջ (գովազդելու ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի կամ կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը կամ տվյալների (տեղեկությունների) այն ձևով

նշումը, որն սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու իրացվող կամ գովազդվող ապրանքի կամ տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ.

4) օրենքին հակասող, այդ թվում՝ անբարեխիղճ կամ հակաօրինական կամ հավաստիության կամ պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդները, որոնք կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերը:

Վերոնշյալից հետևում է, որ օրենսդիրը հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության օբյեկտիվ կողմի սպառիչ ցանկ չի սահմանել, այլ մասնավորեցրել է դրանցից մի քանիսը, որոնք արտահայտվում են.

1. ապրանքի բնութագրերի կամ իրացման պայմանների վերաբերյալ թյուր տպավորության՝ ապակողմնորոշելու հնարավորության ստեղծմամբ, այդ թվում՝ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելու եղանակով.

2. Սպառողին գովազդվող կամ իրացվող ապրանքի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չտալով, այդ թվում՝ թերի, կեղծ կամ ոչ լիարժեք տվյալներ նշելու եղանակով.

3. տնտեսական մրցակցությունը կանխող, սահմանափակող կամ արգելող կամ սպառողների շահերը վնասող օրենքին հակասող գովազդով.

4. ցանկացած այլ դրսևորմամբ, որը ստեղծում է տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց բնութագրերի կամ այլ պայմանների վերաբերյալ մոլորեցնելու հնարավորություն:

Ընդ որում, միևնույն վարքագիծը միաժամանակ կարող է համապատասխանել հասարակության մոլորեցման մեկից ավելի դրսևորումներին: Այսպես, օրինակ՝ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կարող է ոչ միայն ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չտալ, այլ նաև ստեղծել թյուր տպավորության՝ ապակողմնորոշելու հնարավորություն:

<u>Երկրորդ հարցադրման կապակցությամբ.</u>

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում հասարակության մոլորեցումը, այդ թվում՝

1) ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց գովազդմանը, տարածմանը կամ իրացմանը նպաստող միջոցառումների, ապրանքի աշխարհագրական ծագման կամ Օրենքի 20-րդ հոդվածում թվարկված բնութագրերի կամ պայմանների վերաբերյալ.

2) ապրանքների որակն անհիմն չափազանցնելը կամ որակի, քանակի կամ այլ բնութագրերի կամ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կամ տեղեկատվությունն այն ձևով ներկայացնելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման).

3) գովազդի մեջ (գովազդելու ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի կամ կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը կամ տվյալների (տեղեկությունների) այն ձևով նշումը, որն սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու իրացվող կամ գովազդվող ապրանքի կամ տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ.

4) օրենքին հակասող, այդ թվում՝ անբարեխիղճ կամ հակաօրինական կամ հավաստիության կամ պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդները, որոնք կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերը:

Վերոնշյալ կարգավորումների հիման վրա Պատասխանատու ստորաբաժանումը հարկ է համարում, նախևառաջ, արձանագրել, որ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցությունն իր բնույթով ունի ձևական կազմ, այսինքն՝ հետևանքի վրա հասնելը՝ սպառողի մոլորվելու փաստը, վարքագիծը Օրենքի 21-րդ հոդվածով որակելու պարտադիր և անհրաժեշտ պայման չէ: Ըստ այդմ, վարքագիծը հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն իրավախախտում որակելու համար բավարար է միայն մոլորվելու հնարավորությունն ու հավանականությունը, այլ ոչ թե ինքնին մոլորվելու փաստը:

Մյուս կողմից, հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն իրավախախտման ձևական բնույթը դրսևորվում է նրանում, որ արարքը կատարման փաստով համարվում է ավարտված: Այլ կերպ ասած՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից այլ վայրում, այդ թվում՝ ինտերնետային կայքի տարբեր բաժիններում, այլ միջոցով կամ հետագայում անհրաժեշտ տեղեկությունները հայտնելը կամ այլ կերպ հասանելի դարձնելը իրավախախտումը չի վերացնում:

Միևնույն ժամանակ, կարևոր է արձանագրել, որ օրենսդիրը այս իրավախախտման օբյեկտիվ կողմի սպառիչ ցանկ չի սահմանել, այլ մասնավորեցրել է դրանցից մի քանիսը, որոնք արտահայտվում են.

1) ապրանքի բնութագրերի կամ իրացման պայմանների վերաբերյալ թյուր տպավորության՝ ապակողմնորոշման հնարավորության ստեղծմամբ, այդ թվում՝ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելու եղանակով.

2) սպառողին գովազդվող կամ իրացվող ապրանքի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չտալով, այդ թվում՝ թերի, կեղծ կամ ոչ լիարժեք տվյալներ նշելու եղանակով.

3) տնտեսական մրցակցությունը կանխող, սահմանափակող կամ արգելող կամ սպառողների շահերը վնասող օրենքին հակասող գովազդով.

4) ցանկացած այլ դրսևորմամբ, որը ստեղծում է տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց բնութագրերի կամ այլ պայմանների վերաբերյալ մոլորեցնելու հնարավորություն:

Ընդ որում, միևնույն վարքագիծը միաժամանակ կարող է համապատասխանել հասարակության մոլորեցման մեկից ավելի դրսևորումներին: Այսպես, օրինակ՝ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան

տեղեկատվություն չհիշատակելը կարող է ոչ միայն ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չտալ, այլ նաև ստեղծել թյուր տպավորության՝ ապակողմնորոշման հնարավորություն:

Վերոգրյալի համատեքստում ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն առկա չէ, եթե կարող է վնաս հասցվել սպառողների կյանքին, առողջությանը, անվտանգությանը, հասարակական կամ պետական անվտանգությանը կամ շրջակա միջավայրին: Այլ կերպ ասած՝ եթե տնտեսավարող սուբյեկտի վարքագիծը վնասում է կամ կարող է վնասել բացառապես հիշատակված հանրային շահերը, ապա այն դուրս է Հանձնաժողովի իրավասության տիրույթից:

<u>Երրորդ հարցադրման կապակցությամբ.</u>

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.4-րդ հոդվածի համաձայն՝

1. Ակցիան վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման ընթացքում վաճառողի կամ ծառայություն մատուցողի կողմից (այսուհետ նաև՝ **ակցիա իրականացնող**) իրականացվող միջոցառում է, որն ուղղված է սպառողների շրջանում ապրանքների կամ ծառայությունների առաջխաղացմանը կամ իրացման ծավալների մեծացմանը:

2. Ակցիան իրականացվում է հետևյալ եղանակներով.

1) զեղչ.

2) ապրանքի իրացման կամ ծառայության մատուցման գնի փոփոխման հետ չկապված այլ միջոցառում:

3. Սույն գլխով սահմանված կարգավորումները տարածվում են ցանկացած գործողության վրա, որը համապատասխանում է սույն օրենքի իմաստով ակցիայի բնորոշմանը՝ անկախ իրականացված գործողության համար փաստացի կիրառվող անվանումից:

4. Սույն գլուխը կիրառելի չէ հարկային հարաբերությունների նկատմամբ:

Վերոգրյալ կարգավորումների հիման վրա Հանձնաժողովը փաստում է, որ ակցիաները, անկախ նրանից կլինեն զեղչ, թե ապրանքի իրացման կամ ծառայության մատուցման գնի փոփոխման հետ չկապված այլ միջոցառում, սպառողների շրջանում ապրանքների կամ ծառայությունների առաջխաղացմանը կամ իրացման ծավալների մեծացմանն ուղղված կարճաժամկետ միջոցառումներ են, որոնք ակցիա իրականացնողի կողմից իրականացվում են վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման ընթացքում: Ընդ որում էական չէ, թե տնտեսավարող սուբյեկտը (ակցիա իրականացնողը) ինչպես կանվանի իր իրականացրած ակցիան, քանի որ «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի կարգավորումները կտարածվեն այն բոլոր իրավահարաբերությունների վրա, որոնք բնույթով կհամապատասխանեն նշված օրենքով նախատեսված «ակցիա», «զեղչ» և «ապրանքի իրացման կամ ծառայության մատուցման գնի փոփոխման հետ չկապված այլ միջոցառում» հասկացություններին:

Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրում է, որ արդար առևտրի իրականացման, այդ թվում՝ մրցակցային միջավայրի բարելավման և սպառողների իրավունքների պաշտպանության բարձրացման նպատակով օրենսդրի կողմից «Առևտրի

և ծառայությունների մասին» օրենքի 15.5-րդ, 15.6-րդ և 15.7-րդ հոդվածներով սահմանվել են ակցիաների բովանդակությանը և ակցիաների մասին իրազեկմանը ներկայացվող պահանջները: Մասնավորապես.

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.5-րդ հոդվածի համաձայն՝

1. Զեղչը ակցիայի մեկնարկին նախորդող մեկ ամսվա ընթացքում ապրանքի վաճառքի կամ ծառայության մատուցման միջին գնի կարճաժամկետ նվազեցումն է, որն իրականացվում է ապրանքի կամ ծառայության գնի նվազեցման տոկոսային արտահայտման կամ նվազեցված գնի մասին հրապարակային տեղեկացմամբ և ենթադրում է զեղչի ավարտից հետո մինչև զեղչի կիրառումը սահմանված գնի վերականգնում, բացառությամբ եթե նախորդ գնից տարբերվող այլ գնի սահմանումը պայմանավորված է տնտեսական պայմաններով (գործոններով):

2. Գնի իջեցումը չի համարվում զեղչ, եթե վաճառողը կամ ծառայություն մատուցողը չի հայտարարում իր կողմից ակցիա իրականացվելու մասին, կամ հրապարակային չի նշում, հայտնում կամ այլ կերպ տեղեկացնում գնի իջեցման մասին:

3. Ապրանքի կամ ծառայության գնի տոկոսային նվազեցումը կատարվում է ակցիայի մեկնարկի պահին նախորդող մեկ ամսվա ընթացքում ապրանքի վաճառքի կամ ծառայության մատուցման միջին գնից:

4. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով ակցիա իրականացնողը զեղչի մեկնարկի օրվանից ապահովում է զեղչի հրապարակման պահին նախորդող մեկ ամսվա ընթացքում ապրանքի վաճառքի կամ ծառայության մատուցման միջին գնի և զեղչի կիրառմամբ առաջարկվող գնի միաժամանակյա տեսանելիությունը սպառողին:

5. Ակցիա իրականացնողը զեղչ սահմանելիս կարող է նախատեսել սպառողների կողմից որոշակի գործողությունների կատարում ենթադրող և զեղչի կիրառումը պայմանավորող հստակ պայմաններ, որոնք պետք է լինեն պարզ և ընկալելի:

6. Զեղչը յուրաքանչյուր դեպքում կարող է տևել ոչ ավելի, քան մեկնարկի պահից երեք ամիս:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետը չի սահմանափակում ակցիայի գործողության ժամկետում սպառողի կողմից ձեռք բերված ապրանքի կամ ծառայության նկատմամբ ակցիայի պայմանների՝ ակցիայի ժամկետի ավարտից հետո կիրառման հնարավորությունը:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.6-րդ հոդվածի համաձայն՝

1. Ապրանքի իրացման կամ ծառայության մատուցման գնի փոփոխման հետ չկապված այլ միջոցառումը ակցիա իրականացնողի կողմից կիրառվող կարճաժամկետ միջոցառում է, որի ընթացքում վաճառվող ապրանքի կամ ծառայության մատուցման իրացման գնի անմիջական փոփոխություն տեղի չի ունենում, սակայն ակցիայի ընթացքում դրանք ձեռք բերելը դառնում է այլ կերպ շահավետ:

2. Ապրանքի իրացման կամ ծառայության մատուցման գնի փոփոխման հետ չկապված այլ միջոցառումները, ի թիվս այլնի, կարող են ներառել՝

1) ակցիայի գնի դիմաց լրացուցիչ ապրանքի կամ ծառայության առաջարկ.

2) ակցիայի շրջանակում փաթեթի առաջարկ, որի ընդհանուր գինը ավելի ցածր է, քան դրա առանձին բաղադրիչների գների հանրագումարը:

3. Ապրանքի իրացման կամ ծառայության մատուցման գնի փոփոխման հետ չկապված այլ միջոցառումների համար ապրանքի իրացման կամ ծառայության մատուցման գինը, ակցիայի իրականացմամբ պայմանավորված, չի կարող բարձրացվել՝ լրիվ կամ մասնակի ներառելով տրվող նվերների, բոնուսների կամ այլ միջոցների արժեքը:

4. Ակցիա իրականացնողն ապրանքի իրացման կամ ծառայության մատուցման գնի փոփոխման հետ չկապված այլ միջոցառում կիրառելիս կարող է նախատեսել սպառողների կողմից որոշակի գործողությունների կատարում ենթադրող և տվյալ ակցիայի կիրառումը պայմանավորող հստակ պայմաններ, որոնք պետք է լինեն պարզ և ընկալելի:

5. Ապրանքի իրացման կամ ծառայության մատուցման գնի փոփոխման հետ չկապված այլ միջոցառումը յուրաքանչյուր դեպքում կարող է տևել ոչ ավելի, քան մեկնարկի պահից երեք ամիս:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետը չի սահմանափակում ակցիայի գործողության ժամկետում ձեռք բերված ապրանքի կամ ծառայության նկատմամբ ակցիայի պայմանների՝ ակցիայի ժամկետի ավարտից հետո կիրառման հնարավորությունը:

7. Ակցիա իրականացնողը սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ մեկամսյա ժամկետում, չի կարող իրականացնել նույն ապրանքների համար ապրանքի իրացման կամ նույն ծառայության մատուցման գնի փոփոխման հետ չկապված այլ միջոցառում:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.7-րդ հոդվածի համաձայն՝

1. Ակցիա իրականացնողն ակցիայի մասին սպառողներին իրազեկում է տեղեկատվության տարածման ցանկացած եղանակով՝ ցուցանակով, ցուցափեղկով, զանգվածային լրատվության միջոցներով և սպառողներին հասանելի այլ միջոցներով, որոնցից առնվազն մեկը պետք է պարունակի՝

1) ակցիայի էության հակիրճ նկարագրությունը.

2) ակցիայի ենթակա ապրանքների և ծառայության հստակ շրջանակը կամ դրա հասանելիության աղբյուրը.

3) ակցիայի իրականացման ժամանակահատվածը՝ մեկնարկի և ավարտի օրերը.

4) ակցիայի կիրառումը պայմանավորող պայմանների (եթե այդպիսիք առկա են) վերաբերյալ տեղեկատվությունը կամ դրա հասանելիության աղբյուրը:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ ակցիայի ենթակա ապրանքների և ծառայության շրջանակը չնշվելու դեպքում ակցիան կիրառելի է համարվում ակցիայի մեկնարկի պահին ակցիա իրականացնողի մոտ առկա ապրանքների կամ ծառայությունների ամբողջ տեսականու նկատմամբ:

3. Զեղչի վերաբերյալ սպառողներին իրազեկելիս որպես զեղչի կիրառման ամենաբարձր տոկոս նշվում է այն տոկոսը, որով զեղչվում է ակցիայի մեկնարկի պահին ակցիա իրականացնողի մոտ առկա՝ ակցիային մասնակցող ապրանքների կամ ծառայության առնվազն մեկ հինգերորդը:

4. Ակցիա իրականացնողն ապահովում է ակցիայի վերաբերյալ ամբողջական և հավաստի, իսկ գրավոր լինելու դեպքում՝ նաև ընթեռնելի տեղեկատվության հրապարակումը:

5. Ակցիայի պայմանների վերաբերյալ հրապարակման բովանդակության ամենամեծ և ամենափոքր տառաչափերի տարբերությունը չի կարող երկու անգամից ավելի լինել:

6. Այն դեպքում, երբ մինչև ակցիայի ժամկետի ավարտը ակցիային մասնակցող ապրանքները կամ ծառայություններն ամբողջությամբ սպառվում են, ապա ակցիան համարվում է վաղաժամկետ դադարած:

7. Վաճառողը կամ ծառայություն մատուցողը կարող է իր նախաձեռնությամբ ցանկացած ժամանակ դադարեցնել ակցիայի իրականացումը:

8. Ակցիայի վաղաժամկետ դադարման կամ դադարեցման դեպքում ակցիա իրականացնողը պետք է միջոցներ ձեռնարկի ակցիայի իրականացման վերաբերյալ հրապարակումը դադարեցնելու համար:

Այսպես, Ակցիաների վերաբերյալ կարգավորումները մասնավորապես հանգում են հետևյալին.

1. Զեղչի բովանդակությանը ներկայացվող պահանջներ.

- ակցիայի իրականացումը պայմանավորող և սպառողների կողմից որոշակի գործողությունների կատարում ենթադրող պայմանները պետք է լինեն հստակ, պարզ և ընկալելի.
- ակցիան կարող է տևել առավելագույնը երեք ամիս.
- զեղչը կիրառվում է մեկնարկի պահին նախորդող մեկ ամսվա ընթացքում ապրանքի վաճառքի կամ ծառայության մատուցման միջին գնից.

2. Այլ ակցիայի բովանդակությանը ներկայացվող պահանջներ.

- ակցիայի իրականացումը պայմանավորող և սպառողների կողմից որոշակի գործողությունների կատարում ենթադրող պայմանները պետք է լինեն հստակ, պարզ և ընկալելի.
- ակցիան կարող է տևել առավելագույնը երեք ամիս, ընդ որում ապրանքի իրացման կամ ծառայության մատուցման գնի փոփոխման հետ չկապված այլ միջոցառման ժամկետի ավարտից հետո մեկամսյա ժամկետում նույն ապրանքի իրացման կամ նույն ծառայության մատուցման գնի փոփոխման հետ չկապված այլ միջոցառում իրականացնելը արգելվում է.
- ապրանքի իրացման կամ ծառայության մատուցման գնի փոփոխման հետ չկապված այլ միջոցառումներ իրականացնելիս նվերները, բոնուսները կամ այլ առավելությունները չեն կարող հիմք հանդիսանալ ապրանքի իրացման կամ ծառայության մատուցման գնի բարձրացման համար՝ լրիվ կամ մասնակի ներառվելով գնի մեջ.

3. Ակցիաների մասին իրազեկմանը ներկայացվող պահանջներ.

- ակցիայի մասին սպառողին իրազեկման եղանակներից առնվազն մեկը պետք է պարունակի նվազագույնը հետևյալ տվյալները.

- ակցիայի էության հակիրճ նկարագրությունը,
- ակցիայի ենթակա ապրանքների և ծառայությունների շրջանակը, եթե ոչ բոլոր ապրանքներն են ներառված, ընդ որում շրջանակ չնշելու դեպքում ենթադրվում է ամբողջ տեսականին:
- ակցիայի մեկնարկի և ավարտի օրերը,
- ակցիայի կիրառումը պայմանավորող պայմանները կամ դրանց հասանելիության աղբյուրները.

• ակցիայի մասին տեղեկատվությունը պետք է լինի ամբողջական, հավաստի, իսկ գրավորի դեպքում՝ նաև ընթեռնելի, իսկ տառաչափերի տարբերությունը՝ երկու անգամից ոչ ավելի.

• ակցիա իրականացնողը պետք է ապահովի զեղչի հրապարակման պահին նախորդող մեկ ամսվա ընթացքում ապրանքի վաճառքի կամ ծառայության մատուցման միջին գնի և զեղչի կիրառմամբ առաջարկվող գնի միաժամանակյա տեսանելիությունը սպառողին.

• զեղչի կիրառման ամենաբարձր տոկոս կարող է նշվել այն տոկոսը, որով զեղչվում է ակցիայի մեկնարկի պահին ակցիա իրականացնողի մոտ առկա՝ ակցիային մասնակցող ապրանքների կամ ծառայության առնվազն մեկ հինգերորդը.

• ակցիայի վաղաժամկետ դադարման կամ դադարեցման դեպքում ակցիա իրականացնողը պետք է դադարեցնի դրա վերաբերյալ հրապարակումը:

Հանձնաժողովը վերոնշյալ կարգավորումների վերլուծության հիման վրա արձանագրում է, որ դրանց չպահպանումը.

1. ունի մրցակցային իրավիճակի վրա բացասական ազդեցություն, քանի որ ակցիա իրականացնողը ստանում է անհիմն մրցակցային առավելություն.

2. հանգեցնում է սպառողների իրավունքների և օրինական շահերի խախտման, քանի որ, ի թիվս այլնի, վերջիններս չեն ստանում անհրաժեշտ տեղեկատվություն:

Վերոնշյալը համադրելով հասարակության մոլորեցման վերաբերյալ առաջին հարցադրման շրջանակում ներկայացված դրսևորումների հետ՝ Հանձնաժողովը փաստում է, որ

1. ակցիայի բովանդակային պահանջների չպահպանումը, որպես հետևանք, առնվազն հանգեցնում է թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման) հնարավորության.

2. ակցիայի իրազեկման պահանջների չպահպանումը, որպես հետևանք, առնվազն հանգեցնում է ամբողջական պատկերացում ստանալու հնարավորությունից զրկելուն:

Ընդ որում, Հանձնաժողովի գնահատմամբ վերոնշյալ պահանջներից ցանկացածի չպահպանումը, այդ թվում՝ զեղչ չկիրառելու կամ հայտարարվածից քիչ չափով զեղչ կիրառելու ցանկացած դեպք ինքնին բավարար է խախտման փաստն արձանագրելու համար:

Միաժամանակ, Հանձնաժողովը գտնում է, որ, անկախ ակցիային առնչվող օրենսդրական կարգավորումների խախտման հանգամանքից, ակցիայի առնչությամբ տնտեսավարող սուբյեկտի վարքագիծը կարող է հանգեցնել հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության, եթե այն պարունակում է երկրորդ հարցադրման շրջանակում նկարագրված հասարակության մոլորեցման որևէ դրսևորման հատկանիշներ:

<u>Չորրորդ հարցադրման կապակցությամբ.</u>

Տնտեսավարող սուբյեկտի կողմից զեղչ հայտարարելը, սակայն այն անկանխիկ եղանակով վճարման դեպքում չկիրառելը վկայում է այն մասին, որ զեղչը կիրառվում է պայմանով: Զեղչը պայմանով կիրառելու դեպքում պարտադիր է ակցիա իրականացնողի կողմից ակցիայի կիրառումը պայմանավորող պայմանների (եթե այդպիսիք առկա են)

վերաբերյալ տեղեկատվության կամ դրա հասանելիության աղբյուրի մասին սպառողին իրազեկելը:

Այսինքն, զեղչը պայմանով կիրառելու ցանկացած դեպքում պայմանի մասին սպառողին կամ ձեռքբերողին չիրազեկելը, սակայն զեղչը պայմանով կիրառելը ինքնին խախտում է ակցիային ներկայացվող իրազեկման պահանջները: Արդյունքում, այն դեպքում, երբ իրազեկմամբ որևէ պայման նախատեսված չէ, զեղչը պետք է գործի առանց որևէ պայմանի, այսինքն ամբողջ տեսականու համար, իսկ առանց պայմանի զեղչ հայտարարելը և այն ամբողջ տեսականու համար չկիրառելը, ակցիային ներկայացվող բովանդակային պահանջների խախտում է: Այսպիսով, տնտեսավարող սուբյեկտի նման վարքագիծը հանգեցնում է հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության:

Միաժամանակ, Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ տնտեսավարող սուբյեկտի կողմից զեղչը միայն կանխիկ գնման դեպքում իրականացնելու պայմանի սահմանման իրավաչափությանը:

Այսպես, «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը, նոտարները և փաստաբանները իրավունք չունեն անկանխիկ ձևով վճարում նախատեսող ապրանքների օտարման, գույքի օտարման, ապրանքների օգտագործման, գույքի օգտագործման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման գործարքներում (պայմանագրերում) կամ գործարքների (պայմանագրերի) առաջարկներում (օֆերտաներում) առաջարկելու և (կամ) ստանալու ավելի բարձր գին (արժեք), քան առաջարկում և (կամ) ստանում են կանխիկ ձևով վճարում նախատեսող ապրանքների օտարման, գույքի օտարման, ապրանքների օգտագործման, գույքի օգտագործման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման գործարքներում (պայմանագրերում) կամ գործարքների (պայմանագրերի) առաջարկներում (օֆերտաներում):

Վերոգրյալից բխում է, որ վճարման եղանակի տարբերությունը չի կարող հանգեցնել ապրանքի ավելի բարձր գնի սահմանմանը, հետևաբար տնտեսավարող սուբյեկտները պետք է ապահովեն, որ սպառողի կողմից անկանխիկ վճարմամբ գնման դեպքում սահմանված ապրանքի գինը չտարբերվի կանխիկ վճարմամբ գնման դեպքում սահմանված գնից, ըստ այդմ անկանխիկ գնման դեպքում զեղչ չիրականացնելու իրավունք կազմակերպությունները չունեն:

Այսինքն, տնտեսավարող սուբյեկտի կողմից միայն կանխիկ վճարման դեպքում զեղչ իրականացնելու պայման սահմանելն ինքնին արգելվում է:

Ավելին, հարկ է նկատել, որ ակցիա իրականացնողը իրավունք ունի սեփական հայեցողությամբ որոշելու ակցիայի ենթակա ապրանքների շրջանակը, ակցիայի իրականացման կարգը և պայմանները, սակայն, դրանք չպետք է հակասեն օրենքի իմպերատիվ պահանջներին:

Ստացվում է, որ տնտեսավարող սուբյեկտն ազատ է որոշելու իր կողմից իրականացվող ակցիայի պայմանները, սակայն դրանք պետք է սպառողին և ձեռքբերողին ներկայացվեն այնպես, որ չապակողմնորոշեն, ինչպես նաև հնարավորություն տան

պատկերացում կազմել առաջարկվող ապրանքի կամ ծառայության վերաբերյալ, բացի այդ տնտեսավարող սուբյեկտը պարտավորվում է չսահմանել ակցիայի այնպիսի պայմաններ, որոնք հակասում են օրենքներին:

Բացի այդ, տնտեսավարող սուբյեկտների պարտականությունն է ձեռքբերողների և սպառողների հետ հարաբերություններում գործել բարեխղճության սկզբունքի պահպանմամբ, մինչդեռ տնտեսավարող սուբյեկտի կողմից զեղչ հայտարարելը և այն անկանխիկ վճարման դեպքում չիրականացնելու վարքագիծը հանգեցնում է բարեխղճության սկզբունքի խախտման, քանի որ առաջացնում է լրացուցիչ դժվարություններ սպառողների և ձեռքբերողների համար, այն է՝ բացի անկանխիկ դրամական միջոցները կանխիկացնելու ընթացքում ժամանակային ռեսուրսների կորստի, վերջիններս կրում են նաև ֆինանսական որոշակի կորուստներ:

Այսպիսով, տնտեսավարող սուբյեկտի կողմից զեղչը չի կարող կիրառվել միայն կանխիկ եղանակով վճարման դեպքում:

<u>Հինգերորդ հարցադրման կապակցությամբ.</u>

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝

1. Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) անձը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ վարչական մարմնի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ վարչական մարմնի վրա:

3. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-2-րդ մասերի համաձայն՝

1. Կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: Կողմն իրավունք չունի ներկայացնելու այնպիսի ապացույցներ, որոնք չեն ներկայացվել վարչական վարույթի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմը չի ներկայացնում բավարար հիմնավորումներ այն մասին, որ օբյեկտիվորեն զրկված է եղել նշված ապացույցները վարչական վարույթի ընթացքում ներկայացնելու հնարավորությունից:

2. Վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները, բացառությամբ այն ապացույցների, որոնց վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես հակառակ կողմի միջոցով, և որոնք հակառակ կողմը չի ներկայացրել վարչական վարույթի ընթացքում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2.1-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշելիս վիճարկող կողմի՝ իր համար բարենպաստ հետևանքներ առաջացնող ապացույցների՝ վարչական վարույթի ընթացքում չտրամադրման հետևանքով առաջացած ոչ բարենպաստ հետևանքների ապացուցման բեռը չի կարող դրվել վարչական մարմնի վրա:

Վերոնշյալ նորմերից հետևում է, որ անձի համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունը կրում է անձը: Ընդ որում, այն դեպքում, երբ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքները հերքող բարենպաստ փաստական հանգամանքների վերաբերյալ վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա այդ փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը դրվում է նրա վրա:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ վարչական մարմնի հետ փոխհարաբերություններում իր համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունն անձը կարող է կատարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված ապացույցներ ներկայացնելու միջոցով: Ընդ որում, այն դեպքում, երբ անձը վարչական վարույթի ընթացքում չի ներկայացում իր օգտին առկա բարենպաստ փաստական հանգամանքների վերաբերյալ ապացույցներ, զրկվում է դրանք նույնիսկ դատական վարույթում ներկայացնելու հնարավորությունից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ներկայացնում է բավարար հիմնավորումներ այն մասին, որ օբյեկտիվորեն զրկված է եղել նշված ապացույցները վարչական վարույթի ընթացքում ներկայացնելու հնարավորությունից:

Օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովը վարչական վարույթն իրականացնում է Հանձնաժողովի գործունեության ընդհանուր կանոնների համաձայն՝ այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն օրենքով, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Հանձնաժողովի կողմից իրականացվող վարչական վարույթի համար սույն օրենքով առանձնահատկություններ սահմանված չլինելու դեպքում համապատասխան հարաբերությունների նկատմամբ կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթները:

Նման պայմաններում ակնհայտ է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված բարենպաստ փաստական հանգամանքների ապացուցման պարտականության վերաբերյալ կարգավորումները հավասարապես կիրառելի են տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթով պատասխանողի առնչությամբ, քանի որ այդ կապակցությամբ Օրենքը առանձնահատկություններ չի սահմանել:

Վեցերորդ հարցադրման կապակցությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 55-րդ հոդվածի համաձայն՝

1. Գրավոր վարչական ակտին ներկայացվում են հետևյալ պահանջները.

ա) վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում.

բ) վարչական ակտը պետք է կազմված լինի սահմանված ձևի և նմուշի թղթի վրա:

2. Վարչական ակտը, որպես կանոն, պետք է տեղեկություններ պարունակի նաև այն ծախսերի և դրանք կրողների վերաբերյալ, որոնք կատարվել են ակտի ընդունման կապակցությամբ: Ծախսերը վերադարձնելու հետ կապված ակտ ընդունելու դեպքում պետք է նշվեն վերադարձման ենթակա գումարը և վերադարձման կարգն ու պայմանները:

3. Վարչական ակտը կարող է ունենալ ներդիրներ, հավելվածներ կամ լրացուցիչ այլ փաստաթղթեր, որոնց գործողությունը չի կարող գերազանցել վարչական ակտի գործողության ժամկետը: Ներդիրները, հավելվածները և լրացուցիչ այլ փաստաթղթերը ինքնուրույն վարչական ակտեր չեն, դրանք վարչական ակտի բաղկացուցիչ մասն են և գործում են այնքանով, որքանով գործում է բուն վարչական ակտը:

4. Վարչական ակտը պետք է պարունակի՝

ա) վարույթն իրականացրած վարչական մարմնի լրիվ անվանումը.

բ) վարչական ակտի հասցեատիրոջ անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը.

գ) ակտի լրիվ անվանումը, դրա ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը և համարը.

դ) ակտով լուծվող հարցի նկարագրությունը (նկարագրական մաս).

ե) ակտի ընդունման հիմնավորումը (պատճառաբանական մաս).

զ) ընդունված որոշման շարադրանքը (եզրափակիչ մաս).

է) ակտի գործողության ժամկետը, եթե ակտն ընդունվում է որոշակի ժամկետով.

ը) ակտի բողոքարկման ժամկետը և մարմինը, ներառյալ՝ դատարանը, որին կարող է այդ ակտը բողոքարկվել.

թ) ակտն ընդունող վարչական մարմնի պաշտոնատար անձի պաշտոնը, անունը և ազգանունը, նրա ստորագրությունը.

ժ) ակտն ընդունած վարչական մարմնի պաշտոնական կնիքը:

5. Միանման հարց կարգավորող վարչական ակտը կարող է ունենալ միասնական նմուշի ձև (ձևաթուղթ):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 57-րդ հոդվածի համաձայն՝

1. Գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը:

Վարչական մարմնի հայեցողական լիազորությունների իրականացման արդյունքում ընդունված վարչական ակտի հիմնավորումից պետք է պարզ լինեն այն նկատառումները, որոնց հիման վրա վարչական մարմինն ընտրել է տվյալ լուծումը:

2. Հիմնավորում չի պահանջվում, եթե՝

ա) վարչական մարմինը բավարարում է որևէ դիմում, և վարչական ակտը չի շոշափում երրորդ անձանց իրավունքները.

բ) ակտի հասցեատիրոջը կամ այն անձին, ում շահերը վարչական ակտը շոշափում է, արդեն հայտնի է վարչական մարմնի դիրքորոշումը փաստական կամ իրավական հետևանքների վերաբերյալ, կամ այդ դիրքորոշումն ակնհայտորեն բխում է ակտի տեքստից.

գ) վարչական մարմինը նույնանման վարչական ակտեր է հրապարակում մեծ քանակությամբ կամ վարչական ակտերը հրատարակում է տեխնիկական միջոցների օգտագործմամբ, և յուրաքանչյուր առանձին դեպքում հիմնավորելու անհրաժեշտություն չկա:

3. Արգելվում է վարչական մարմնի ընդունած վարչական ակտերի հիմնավորումն այն փաստարկներով, որոնք չեն առնչվում տվյալ մարմնի իրավասությանը:

Եվրոպական դատարանը, անդրադառնալով դատական ակտերի պատճառաբանվածությանը՝ որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մաս, արձանագրել է, որ դատարանները պարտավորվում են իրենց որոշումները պատճառաբանել, սակայն դա չի կարող ընկալվել որպես յուրաքանչյուր փաստարկի մասով մանրակրկիտ պատասխան ներկայացնելու պահանջ: Պատճառաբանելու պարտականության ծավալը կարող է տարբեր լինել՝ կախված որոշման բնույթից և կարող է որոշվել միայն գործի հանգամանքների լույսի ներքո. անհրաժեշտ է հաշվի առնել, inter alia, այն բազմազան գրավոր փաստարկները, որոնք դատարաններում կարող է ներկայացնել դատավարության մասնակիցը, (...) (տե՛ս, Van de Hurk v. the Netherlands գործով Եվրոպական դատարանի 19.04.1994 թվականի վճիռը, կետ 61, Hiro Balani v. Spain գործով Եվրոպական դատարանի 09.12.1994 թվականի վճիռը, կետ 27):

Նույնաբովանդակ դիրքորոշում արտահայտել է նաև Վճռաբեկ դատարանը՝ արձանագրելով, որ արդար դատաքննության իրավունքը չի կարող ընկալվել որպես պահանջ՝ մանրամասնորեն պատասխանելու կողմերի բարձրացրած բոլոր փաստարկներին (տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/0531/05/16 վարչական գործով 2021 թվականի հոկտեմբերի 29-ի և թիվ ՎԴ5/0173/05/18 վարչական գործով 2021 թվականի նոյեմբերի 19-ի որոշումները):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պատասխանատու ստորաբաժանումը գտնում է, որ վարչական ակտ կայացնելիս տնտեսավարող սուբյեկտի ոչ էական փաստարկներին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է: Ըստ այդմ, սույն գործի շրջանակում առանձին քննարկման առարկա չդարձված Վարույթով պատասխանողի փաստարկները Պատասխանատու ստորաբաժանման կողմից գնահատվել են այդ տրամաբանությամբ:

<u>Վերոշարադրյալ դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.</u>

Սույն գործի փաստերի համաձայն.

1. Ընկերության կողմից իրականացվել է զեղչի կիրառմամբ ակցիա, որի մեկնարկի և ավարտի օրերի մասին տեղեկատվությունն Ընկերությունը իրազեկման որևէ միջոցով չի տրամադրել:

2. Կայքում ներկայացված որոշ ապրանքներ ունեցել են երկու արժեք՝ «Գինը» և «Զեղչված արժեք»: Տվյալ ապրանքը գնելու դեպքում ներկայացվել է վճարման ենթակա միայն «Գինը» տարբերակում ներկայացված, «Զեղչված արժեք» տարբերակից ավելի բարձր գին ունեցող տարբերակը: Օրինակ՝

1) Սմարթֆոն - Samsung Galaxy A06 4/64 GB (Gold), գինը 44 000 AMD, զեղչված արժեք 41 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 44 000 AMD:

2) Սմարթֆոն - Samsung Galaxy A25 8/256 GB (Black), գինը 101 000 AMD, զեղչված արժեք 92 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 101 000 AMD:

3) Սմարթֆոն - Samsung Galaxy A55 8GB/256 GB (Lemon), գինը 159 000 AMD, զեղչված արժեք 139 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 159 000 AMD:

4) iPhone 12 64GB (White), գինը 205 000 AMD, զեղչված արժեք 195 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 205 000 AMD:

5) Սմարթֆոն - iPhone 11 128GB (White), գինը 219 000 AMD, զեղչված արժեք 197 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 219 000 AMD:

6) Սմարթֆոն -iPhone 12 128GB (Black), գինը 235 000 AMD, զեղչված արժեք 209 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 235 000 AMD:

7) Սմարթֆոն - Samsung Galaxy S23 128 GB (Phantom Black), գինը 255 000 AMD, զեղչված արժեք 229 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 255 000 AMD:

8) Սմարթֆոն – Xiaomi Poco F6 Pro 16/1TB (White), գինը 285 000 AMD, զեղչված արժեք 254 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 285 000 AMD:

9) Սմարթֆոն - Samsung Galaxy Z Fold 6 12/256 GB (Pink), գինը 609 000 AMD, զեղչված արժեք 549 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 609 000 AMD:

10) Պլանշետ – Samsung Galaxy Tab A8 10.5 32 GB (x200) (Gray), գինը 78 000 AMD, զեղչված արժեք 70 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 78 000 AMD:

11) Պլանշետ – iPad mini 6 64 GB Wi-Fi (Starlight), գինը 229 000 AMD, զեղչված արժեք 209 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 229 000 AMD:

12) Նոթբուք – Lenovo V 15 G4 IRU (Core 13), գինը 178 000 AMD, զեղչված արժեք 163 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 178 000 AMD:

13) Նոթբուք – Dell Vostro 3520 (I7/16GB/512GB), գինը 309 000 AMD, զեղչված արժեք 289 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 309 000 AMD:

14) Տպիչ – HP Color Laser Jet Pro 4203DW, գինը 275 000 AMD, զեղչված արժեք 255 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 275 000 AMD:

15) Ֆոտոխցիկ – Insta360 GO 3S 64GB (Black), գինը 235 000 AMD, զեղչված արժեք 215 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 235 000 AMD:

16) Ականջակալ – Apple AirPods Max (Green), գինը 237 000 AMD, զեղչված արժեք 214 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 237 000 AMD:

17) Ականջակալ – Samsung Galaxy Buds 3 Pro (White), գինը 85 000 AMD, զեղչված արժեք 72 800 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 85 000 AMD:

18) Վարսահարդարիչ – Dyson Airwrap Complete Long Volumise HS05 (Strawberry Bronze/Blush Pink), գինը 284 000 AMD, զեղչված արժեք 259 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 284 000 AMD:

19) Փոշեկուլ – Xiaomi Vacuum Robot E5 (White), գինը 61 000 AMD, զեղչված արժեք 55 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 61 000 AMD:

20) Խաղային Կոնսոլներ – Playstation 5 Slim Digital Edition, գինը 234 000 AMD, զեղչված արժեք 214 000 AMD: Ձևակերպել պատվերը դաշտում ներկայացվում է ենթակա է վճարման 234 000 AMD:

3. Հսկիչ գնմամբ ձեռք է բերվել Samsung Galaxy A55 հեռախոսը, որի արժեքը զեղչի կիրառմամբ 139 000 ՀՀ դրամ էր, իսկ առանց զեղչի՝ 159 000 ՀՀ դրամ: Հսկիչ գնումն իրականացվել է անկանխիկ եղանակով և Samsung Galaxy A55 հեռախոսի համար վճարվել է 159 000 ՀՀ դրամ:

Վերոնշյալի կապակցությամբ Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1. Արդյո՞ք Ընկերության կողմից պահպանվել են ակցիայի մասին իրազեկման պահանջները:

2. Արդյո՞ք Ընկերության կողմից պահպանվել են ակցիայի բովանդակային պահանջները:

<u>Առաջին հարցադրման կապակցությամբ.</u>

Ընկերության կողմից իրականացվել է զեղչի կիրառմամբ ակցիա, որի կիրառումը պայմանավորող հստակ պայմանների, զեղչի մեկնարկի և ավարտի օրերի մասին տեղեկատվությունն Ընկերությունը իրազեկման որևէ միջոցով չի տրամադրել:

Փաստացի Ընկերության կողմից ակցիայի մասին սպառողին իրազեկման եղանակներից որևէ մեկը չի պարունակել օրենսդրությամբ սահմանված նվազագույն տվյալները:

Այսպիսով՝ Պատասխանատու ստորաբաժանումն արձանագրում է, որ ակցիայի կիրառումը պայմանավորող հստակ պայմանները, մեկնարկի և ավարտի օրերը կամ դրանց հասանելիության աղբյուրները ակցիայի մասին իրազեկման որևէ եղանակով հասու չեն եղել սպառողներին՝ հնարավորություն չտալով ամբողջական պատկերացում կազմելու Ակցիայի մասին:

<u>Երկրորդ հարցադրման կապակցությամբ.</u>

Տվյալ դեպքում Հսկիչ գնմամբ ձեռք է բերվել Samsung Galaxy A55 հեռախոսը, որի արժեքը զեղչի կիրառմամբ 139 000 ՀՀ դրամ էր, իսկ առանց զեղչի՝ 159 000 ՀՀ դրամ: Հսկիչ գնումն իրականացվել է անկանխիկ եղանակով և Samsung Galaxy A55 հեռախոսի համար վճարվել է 159 000 ՀՀ դրամ:

Բացի այդ, Ընկերությունը Դիրքորոշմամբ հայնտել է, որ սպառողը «զեղչված» արժեքից կարող է օգտվել կանխիկ եղանակով գնում կատարելու դեպքում և «REDstore.am» կայքի «Գնում կատարելու պայմաններ և դրույթներ» բաժնում հստակ նշված է, որ զեղչված արժեքից օգտվելու համար պետք է ընտրել «Կանխիկ առաքիչի միջոցով» վճարման եղանակը:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ Ընկերությունը զեղչ հայտարարելիս որևէ իրազեկման աղբյուրով չի տեղեկացրել զեղչի կիրառման պայմանի առկայության մասին, ըստ այդմ գնորդի ընկալմամբ զեղչը պետք է գործեր առանց որևէ պայմանի, այսինքն ամբողջ տեսականու համար, իսկ առանց պայմանի զեղչ հայտարարելը և այն ամբողջ տեսականու համար չկիրառելը, ակցիային ներկայացվող բովանդակային պահանջների խախտում է: Այսպիսով, Ընկերությունը զեղչը չէր կարող կիրառել միայն կանխիկ վճարման դեպքում, քանի որ նման բացառություն նախատեսված չի եղել: Բացի այդ, անկանխիկ վճարման դեպքում զեղչ չկիրառելը օրենքով ուղղակիորեն արգելվում է և նման պահանջի սահմանումը հակասում է օրենքի իմպերատիվ պահանջներին:

Ավելին, Ընկերության կողմից զեղչ հայտարարելու և այն անկանխիկ վճարմամբ գնման դեպքում չկիրառելու վարքագիծը խախտում է բարեխղճության սկզբունքը, քանի որ առաջացնում է լրացուցիչ դժվարություններ սպառողների և ձեռքբերողներ համար, այն է՝ բացի անկանխիկ դրամական միջոցները կանխիկացնելու ընթացքում ժամանակային ռեսուրսների կորստից, վերջիններս կրում են նաև ֆինանսական որոշակի կորուստներ (կանխիկացման համար գանձվող տոկոսներ, վճարումների արդյունքում վերադարձվող «cashback»-ի կորուստ):

Ստացվում է, որ.

1. Ընկերության կողմից հայտարարվել է զեղչ, սակայն ակցիայի բովանդակությունից հստակ, պարզ և ընկալելի չի եղել, թե ինչ վավերապայմանների առկայության դեպքում է գործում զեղչը:

2. Ընկերությունը կողմից իրականացված ակցիան սպառողին հնարավորություն չի ընձեռել՝ պատկերացում ձևավորել ակցիայի կիրառման մեկնարկի և ավարտի օրերի մասին:

3. Ընկերության կողմից իրականացված զեղչը հակասում է օրենքներին և խախտում է ձեռքբերողների և սպառողների հետ հարաբերություններում բարեխղճության սկզբունքները:

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ՝ Պատասխանատու ստորաբաժանումն արձանագրում է, որ Ակցիայի առնչությամբ Ընկերության վարքագիծը.

1. կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման).

2. կարող է սպառողներին հնարավորություն չտալ ամբողջական պատկերացում կազմել Ընկերության կողմից առաջարկվող ապրանքների գների վերաբերյալ.

3. հակասում է օրենսդրության պահանջներին.

4. խախտում է Ընկերության ու սպառողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պատասխանատու ստորաբաժանումն արձանագրում է, որ հայտարարված զեղչի մեկնարկի և ավարտի օրերի մասին որևէ միջոցով չիրազեկելու, ինչպես նաև զեղչ հայտարարելու և այն անկանխիկ եղանակով գնման դեպքում չկիրառելու առնչությամբ Ընկերության վարքագիծն ինչպես առանձին, այնպես էլ համակցության մեջ պարունակում է անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ, որի կապակցությամբ օրենսդրությամբ նախատեսված է իրավական հետևանք՝ պատասխանատվության միջոցի կիրառում:

2) Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու հարցի կապակցությամբ.

Օրենքի 92-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:

Օրենքի 93-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափը կազմում է իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի նկատմամբ սույն հոդվածում նախատեսված տոկոսը:

Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ

տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը սահմանում է պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը:

Օրենքի 94-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանվում է Հանձնաժողովի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով:

Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանելու մասին» թիվ 395-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 395-Ն որոշում**) սահմանված պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանության (այսուհետ նաև՝ **Մեթոդաբանություն**) 1-ին կետի համաձայն՝ պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը կարգավորում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված տնտեսական մրցակցության բնագավառում պատասխանատվության միջոցների ընտրության և տուգանքի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

Մեթոդաբանության 9-րդ կետի համաձայն՝ տուգանքը հաշվարկում է հետևյալ բանաձևով.

$$S = Բ + Բ \times (Ծ - Մ)$$

Որտեղ՝

S-տուգանքի չափն է,

Բ-տուգանքի բազային գումարը,

Ծ-ծանրացնող բոլոր հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարը,

Մ-մեղմացնող բոլոր հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարը:

<u>Բազային գումարի հաշվարկը.</u>

Մեթոդաբանության 9-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ երրորդ խումբ իրավախախտումների դեպքում կիրառվող մեթոդը վերաբերում է ակցիաներին:

Մեթոդաբանության 24-րդ կետի համաձայն՝ երրորդ խումբ իրավախախտումների դեպքում կիրառվող տուգանքի բազային գումարը հաշվարկվում է $Բ = Հ \times 5\% \times Ժ$ բանաձևով, որտեղ՝

Բ-ն տուգանքի բազային գումարն է,

Հ-ն ընդհանուր հասույթն է,

Ժ-ն իրավախախտման տևողության գործակիցն է:

Ընդհանուր հասույթ.

Մեթոդաբանության 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ընդհանուր հասույթը համապատասխան ժամանակահատվածում ստացված ընդհանուր հասույթի գումարն է:

Մեթոդաբանության 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ համապատասխան ժամանակահատվածը Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու մասին որոշման ընդունման պահին դադարեցված իրավախախտումների դեպքում՝ իրավախախտման դադարեցմանը նախորդող տարին է: Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու մասին որոշման ընդունման պահին չդադարեցված իրավախախտումների դեպքում՝ Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող տարին է: Իրավախախտման դադարեցման կամ վարույթ հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող տարում 12 ամբողջական ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում՝ իրավախախտման դադարեցման կամ վարույթ հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող, բայց ոչ ավել քան 12 ամբողջական ամսվա գործունեության ժամանակահատվածն է:

Իրավախախտման տևողությունը.

Մեթոդաբանության 26-րդ կետի համաձայն՝ իրավախախտման տևողության գործակիցը հաշվարկվում է Ժ = Թ/Օ բանաձևով, որտեղ՝ Ժ-ն իրավախախտման տևողության գործակիցն է, Թ-ն ակցիայի տևողության օրերի թիվն է, Օ-ն 365 է, իսկ իրավախախտման նախորդող տարում 12 ամբողջական ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում՝ իրավախախտման դադարեցմանը կամ վարույթ հարուցելու մասին որոշման ընդունման պահին չդադարեցված իրավախախտումների դեպքում վարույթ հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող, բայց ոչ ավել քան 12 ամբողջական ամսվա ընթացքում իրականացրած գործունեության ժամանակահատվածի օրացուցային օրերի թիվն է:

<u>Պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքներ.</u>

Մեթոդաբանության 43-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը դիտարկում ու վարչական ակտում արտացոլում է միայն այն ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, որոնք հաստատվել են համապատասխան վարույթի ընթացքում:

Մեթոդաբանության 33-րդ, 34-րդ, 39-րդ և 40-րդ կետերով սահմանված են երրորդ խումբ իրավախախտումների դեպքում պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև սահմանված են բազային գումարից ծանրացնող հանգամանքների հաշվարկման դրույքաչափերը:

Մեթոդաբանության 44-րդ կետի համաձայն՝ մեղմացնող հանգամանքի առկայության ապացուցման բեռը կրում է վարույթով պատասխանողը:

Այսպիսով, Պատասխանատու ստորաբաժանման կողմից նախնական գնահատմամբ տուգանքի հաշվարկման համար առկա են հետևյալ հանգամանքները.

1. տուգանքի բազային գումարի հաշվարկման համար Պատասխանատու ստորաբաժանումը հիմք է ընդունում Ընկերության 2024 թվականի ընդհանուր հասույթի չափը, որը կազմում է 2 881 747 735 ՀՀ դրամ:

2. Սույն գործով իրավախախտման օրերի թիվը 90 է:

3. Սույն գործով Պատասխանատու ստորաբաժանման կողմից որպես ծանրացնող որևէ հանգամանք չի հայտնաբերվել և չի հաստատվել, հետևաբար ծանրացնող հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարը կազմում է 0%:

4. Սույն գործով Պատասխանատու ստորաբաժանման կողմից որպես մեղմացնող որևէ հանգամանք չի հայտնաբերվել և չի հաստատվել, հետևաբար մեղմացնող հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարը կազմում է 0%:

Միաժամանակ, Պատասխանատու ստորաբաժանումն արձանագրում է, որ Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովի կողմից գնահատման ենթակա այլ հանգամանքներ առկա չեն:

ԱՄՎՎ պետ **Ա. Հովհաննիսյան**

ԱՄՎՎ ՍԾՊ բաժնի պետ **Մ. Խաչատրյան**

Կատարող՝ ԱՄՎՎ ՍԾՊ բաժնի ավագ մասնագետ **Ա. Վահանյան**

23.04.2025 թ.